


Ա. ԳՈՒՂՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏՎԱՆ
ԸՆԸՆԸՊԸՀՈՒԹՅԱՆ
ՀԵՏՎԱԾ
ԶԵՐԳԵՑՄԱՆ ՈՒԴԻՆԵՐՈՎ.



Գ.ՑՈՒԿ.ՀՐՈՍ - ԵՄՐԵՎԱՆ - 1935

38-1(47) Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

17 FEB 2010

7-87

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Ս Տ Ա Կ Ա Ն
Ա Ն Ա Ս Ն Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ե Տ Ա Գ Ա
Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ո Ւ Ղ Ի Ն Ե Ր Ո Վ

(ՀԱԽԱՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՁԻ ՆԱԽԱԳԱՀ
ԸՆԿ. Ա. ԳՈՒԼՈՅԱՆԻ ՑԱՌԸ՝
1935 թ. ՀՈՒՆԻՍԻ 6-ի ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒՆՈՒՄ)

27 MAR 2013

30.193

ԸՆԿԵՐՆԵՐ

Թե զեկուցողները և թե մտքերի փոխանակությանը մասնակցող ընկերները—մեր հարվածալին անասնապահները—շոշափեցին մեր անասնապահության համարյա բոլոր խնդիրները: Նրանք, խոսելով մեր ունեցած պակասությունների մասին անասնապահության ասպարիզում, արին մի շարք կարևոր և արժեքավոր առաջարկներ՝ անասնապահության պետական պլանը կատարելու վերաբերյալ: Նրանք պատճեցին իրենց աշխատանքի և ձեռք բերած հաջողությունների դրական փորձի մասին, վորը, կարծում եմ, պետք և ամենալայն չափով ոգտագործեն մեր անասնապահական ֆերմաները: Նրանք պատճեցին այն մասին, թե ինչպես, կատարելով կուսակցության և նրա առաջնորդ ընկերությունին ցուցումները, կարողացան իսկապես բեկում առաջ բերել անասնապահության մեջ և մեր տնտեսության արդ լետ մնացող ձևուղը նույնպես դուրս հանել մեծ վերելքի ճանապարհը:

Յեզ քանի վոր, ընկերներ, արդ բոլորի մասին դուք խոսեցիք, դրա համար ել թուլլ տվեք ինձ կանգ առնել միայն մի քանի կարե-



Տպագրության համար
պատրաստեց Պ. Սարոյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Օրբագիր՝ Խ. Ալվազյան
ՎԿ 209. 59

Հրատ. № 241, Գլավկիտի լիազոր Գ—121, պատվեր 430, տիրած 2000
Հանձնվել ե արտադրության 1935 թ. հունիսի 28-ին
Ստորագրված ե տպագրելու 1935 թ. հուլիսի 13-ին
Գյուղերատի տպագրան. Յեղեան, Նալբանդյան 11

վորագուշն հարցերի վըա: Այդ հարցերը կամ բոլորին չշոշափեցին, կամ չդրվեցին այն խորությամբ ու ծավալով, ինչպես հարկն ե, դրա համար ել յես կուզենայի դրանց մասին խռոել մի քիչ ավելի մանրամասն:

Ա.Ռ.Ջ.Ք.Ն.

Առաջին հարցն այն ե, թե ինչպես ավելացնենք մայր անասունների բազմացումը, այսինքն՝ յեղած անասուններից ավելի մատղաշուանանք, քան ստացվում ե սովորաբար:

Բոլորիդ հայոնի յե, վոր մեր ֆերմաների հոտերն ու նախիրները լրացնելու և առնասարակ սոցիալիստական անասաբուծության ընդլայնած վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ ե, վոր, պատկերավոր ասած, շարունակ վարար պահենք մատղաշի հոսանքը մեր ֆերմաներում:

Հենց այդ նպատակին են ուղղված այն ձեռնարկումները, այն լայնածավալ պայքարը, վոր մենք մղում ենք անասունների ստերչության, վիճումի դեմ, և մատղաշի որինակելի խնամքի ու պահպանության համար:

Սակայն միայն այդ ուղղությամբ աշխատելով, առավելագույն արդյունքն այն կլինի, վոր մեր նախիրների և հոտերի թիվը տարեկան կավելանա մոտ 20 տոկոսով: Բայց չե՛ վոր աճան այդ տեսալը մեզ այժմ գոհացնել չի կարող:

Նկատի ունեցեք, ընկերներ, վոր մեր յերկրությամբ մեծ չափերով աճել ե կաշվի, գործվածքեղենի, կոնսերվի արդյունաբերությունը, վորը մեծ քանակությամբ կաշի, բուրդ և միս ե պահանջում: Աճել ե մեր յերկրի ազգաքնակչությունը, աճել են քաղաքները, ավելի յե բարգորեն բանվոր դասակարգի գրությունը և աճել են նրա պահանջները, ինչպես և կոլտնտեսական շարժման բուն վերելքի, կոլտնտեսությունների ամրապնդման հիման վրա մեծ չափերով աճել են ունկոր դարձող կոլտնտեսական գյուղացիության սպառողական պահանջները:

Բայց վրա դիմաց ահա թե ինչ ունենք. — 1929 թ. հունիսի 1-ին ունեցած 892.000 գլխի դիմաց այս տարվա հունվարի մեկին մենք չայլաստանում ունենք 556.000 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն: Նույն տարվա 1.810.000 վոչխարի և այծի դիմաց այս տարի ունենք 717.000 այծ ու վոչխար: Թեև անցյալ տարվա հունվարի համեմատությամբ անասունների թիվը մեզ մոտ աճել ե, խոշոր յեղջյուրավորինը՝ 73.460 գլխով, մասնինը՝ 107.900, խոկ խողերի թիվը՝ 23.920 գլխով, բայց, ինչպես տեսնում եք, նվազումը մեծ ե և այդ կատարվել ե ձեզ բոլորիդ քաջ հայոնի պատճառներով: Այժմ, ինարկե, կուսակցության հզոր ձեռքով շակվում ե և այդ ֆրոնտը: Բայց, կրկնում եմ, տարեկան 20 տոկոսի աճով մենք արագ չենք հասնի

29 թվի մակարդակին և այդ մակարդակն այն արագությամբ չենք լետ թողնի, վոր այժմ պահանջվում է թե՝ արդյունաբերության և թե մասսաների պահանջի բուռն աճման շնորհիվ:

Մենք ձգտում ենք և հաջողությամբ սկսել ենք այդ իրագործել—այդ աճող պահանջները բավարարել անասունների ցեղի բարելավման, նրանց արդյունավետությունը բարձրացնելու, անասունների խնամքն ու մատղաշների պահպանումը լավացնելու հիման վրա՝ անասունների քանակն ավելացնելու միջոցով։ Այդ գործում, ինչպես ձեզ հայտնի յե, մենք արգեն ունենք խոշոր բեկում։ և մատղաշների պահպանումը, անասուններին լավ խնամքն ու նրանց ցեղի ազնվացումն այն վճռական միջոցներն են, վորոնց հիման վրա մենք պետք ե ավելացնենք մեր անասունների քանակն ու նրանց արդյունավետությունը։ Սակայն անասունների քանակն ավելի արագ տեմպով բարձրացնելու համար կամի ուրիշ միջոց ևս, վորի վրա մեր տնտեսական դեկավար որգանները և կոլտնտեսային ֆերմաները հարկ լեղած ուշադրությունը չեն դարձնում։

Այդ միջոցն անասունների բազմապտղությունն է։

Բազմապտղություն ասելով հասկանում ենք այն, վոր հաճախ վոչխարները և կովերը զույգ

են ծնում, վոչխարները կամ այծերը յերբեմն յերեք գառ կամ ուլ են բերում և ալլն։

Հետևապես, յեկեք, ընկերներ, անասունների ցեղը բարելավելու, նրանց վորակը բարձրացնելու հետ մեկտեղ, կիրառենք այնպիսի միջոցներ, վորոնց շնորհիվ ավելի շատ գառ ու հորթ ստանանք, քան ստանում ե զուղացին դարեր շարունակ՝ հաճածայն ծննդաբերության ընական որենքների։

Մի որ, ընկերներ, մեր թերթերից մեկում աշխովս ընկալ այսպիսի թղթակցություն։

«ՄԵԿ ՄՈՐԻՑ 7 Ա.ՅՆ

Թալինի շրջանի Աօն-Նկի կոլխոզի Ֆերմայի «Խազալ» այծն անցած տարի մարտի 17-ին ծնեց 3 ուլ. ուստի նույն այծը ծնել է 2 ուլ, յեվ նոր անցած տարվա ուլերից մեկը նույնպես ծնել է մեկ ուլ։ Այսպիսով, մեկ տարվա ընթացքում մեկ այծը դառնում է յոր այծ։»

Վազպատի թերթը հաղորդում է, վոր ՄԵՐ մանդաբ գյուղի կոլտնտեսական Նովրուզովի այծը ծնել է 4 ուլ։ Հոկտեմբերյանից ինձ տեղեկություն և ուղարկված այն մասին, վոր Միրզախան գյուղի կոլտնտեսության ամեն 100 մար վոչխարից 1934 թվին ստացվել է մոտ 140 գառ։ Յեվ, վերջապես, Արագդաշանի խորհանտեսությունում անցյալ տարի մի քանի տասնյակ վոչխարներ ամեն մեկը 3 գառ և ծնել։

Ինչպես տեսնում եմ, բնության այս խաղը բավական շարժեց ձեր հետաքրքրությունը։ Բայց

այդ յերեսուցիթը բնության խաղ, սոսկ պատահա-
կանություն ե արդյոք:

Անշուշտ այս յերեսուցիթն ունի իր պատճառ-
ները:

Յեթե, որինակ, Վ. Թալինի Փերմայի ավագ
հովիվ Ղուկաս բիձուն հարցնենք (վորը 35 տարի
հովվություն ե արել և հիանալի վոչխար ու զառ
ե պահում), նա վոչխարների ջուխտ բերելը կկա-
պի արոտի հետ:

—Աշնանը դոչը խառնելիս հանգում կերը
պակաս եր, դրա համար ել այս տարի ջուխտը
քիչ յեղավ,—կապատճառաբանի նա:

Ընկերներ, այդ հարցից թեև յես շատ գլուխ
չեմ հանգում, բայց հենվելով գիտության տվյալ-
ների և փորձի վրա, կարելի յե պնդել, վոր
բազմապտղությունը բնության խաղ չե, պատա-
հական յերեսուցիթ չե, և այդ կարելի յե պլանա-
վորել ու ծառայեցնել մեր հոտերն աճեցնելու
այնքան կարևոր գործին:

Յես, ընկերներ, «Ովցեվողատվո» ժուրնա-
լում մի հոգված կարդացի, վորտեղ նշված ե,
վոր Խուսաստանում, վոչխարների միշտերկու-
տեսակներ (որինակ՝ ոռմանովյանը, հյուսիսային
կարճ պոչավորը) սովորաբար զույգ գառներ են
ծնում: Հոկտեմբերյան շրջանի այն գյուղը, վոր
յես հիշատակեցի, առաջին անգամ չե, վոր հա-
րուրաբար վոչխարների տակ զույգ-զույգ գառ-
ներ ե տեսնում: Ասում են, վոր այստեղ, վոչ-

խարների այդ տեսակի մեջ զույգ և յերեք գառ-
տալը մշտական յերեսուցիթ ե: Դրա ապացուց-
ներից մեկն այն ե, վոր այս գարնանը նըանց
1000 վոչխարից 1300 գառ ե ստացվել: Յես
տացի, վոր անցյալ տարի Արագայանում մի
շարք վոչխարներ Յական գառ են ծնել: Ասում
են, վոր այս տարի Արագայագի խորհանտեսություն
տարած՝ Արագայանի վոչխարներից մի քանիսը
նորից Յական գառ են ծնել:

Այս անչափ ուշագրավ յերեսուցիթ ե, վորը
սակայն, գժբախտաբար, անուշագրության ե
մատնված մեր գիտահետազոտական հիմնարկնե-
նի կողմից: Մարդիկ նույնիսկ նեղություն չեն
կըել Յական գառ տվող վոչխարներին առանձ-
նացնել ուսումնասիրության համար, փորձել
աենանելու համար, կրկնվում ե այդ յերեսուցիթը
նրանց մեջ հաջորդ տարիներին, թե այդ յերե-
սուցիթը պատահականություն ե: Մի գուցե ճիշտ
է փորձված հոլիվների այն պնդումը՝ թե բազ-
մապատճեն կապ ունի լավ խնամքի հետ:

Ինչելիցե, ընկերներ, այս յերեսուցիթն ու-
շագրության և ուսումնասիրության կարուտ ե:
Պետք ե հատուկ ուսումնասիրության յենթարկել
և զարգացնել բազմապտղ մայրերին, և շատ
հսարաւոր ե, վոր սելիկցիայի միջոցով մեղ մոտեն
վոչխարի անալիսի տեսակ ստացվի, վորը յուրա-
քանչյուր անգամ ծնելիս, վորպես կանոն, յերկու

գառ բերի: Դուք կասեք, վոր սելեկցիան յերկար տարիներ պահանջող դործ ե, սակայն դա չի խանգարում սելեկցիայի դործն անմիջապես սկսելու: Բայց դրա հետ միասին, յես այս և առաջիկա տարիների համար ավելի գործնական միջոց կառաջարկելի: Մենք հենց այս տարի ել առանց հույսներս պատահականությունների վրա դնելու, կարող ենք պլանավին կերպով վոչխարից տարեկան 2 գառ ստանալ՝ մեկը գարնանը, մոտավոր՝ աշնանը, կամ կարելի յե 2 տարում 3 սերումդ ստանալ, մի բան, վոր ավելի հեշտ ե և ոեալ իրազործելի: Այս արդեն լիովին հիմնավորված ե թե գիտության և թե կյանքի տվյալներով:

Խորհրդավին Միության առաջավոր մարզերում այս գծով շատ փորձեր են յեղել. 2 տարում 3 սերումդ ստացվել ե հետեւալ կերպ. վոչխարը բեղմնավորվում ե սովորական ժամկետին՝ հոկտեմբերի 15-ին, ծնում ե մարտի 15-ին: Յերկու և կես ամիս հետո գառն արդեն կարելի յե «Ճճից կտրել»: Դրանից հետո վոչխարին մեկ ամիս հանդիսատ են տալիս և բեղմնավորում հուլիսի 1-ին: Ծնունդը տեղի յե ունենում դեկտեմբերի 1-ին: Յերրորդ անգամ մայր վոչխարը բեղմնավորվում ե մարտի 15-ին և սերումդ ե տալիս ոգոստոսի 15-ին, և ապա 4-րդ անգամ բեղմնավորվում ե առաջին բեղմնավորման ժամկետին՝ հոկտեմբերի 15-ին:

Այդ փորձերը դրել ու հաջող արդյունք են ատացել ինչպես Ռեզբեկստանի «Ղըզըլ Եխտիադ», «Ղըզըլ Ղոշուն», «Ենգրեն», «Չուբան» և այլ կոլտնտեսություններում, նույնպես և մեզ մոտ՝ Գորիսի շրջանի մի քանի ֆերմաներում:

Այս տարի, Միության մեջ, գարնանը սերունդ ստանալուց հետո, մայիսին բեղմնավորվել ե 570.000 գլուխ մայր վոչխար: Մեզ մոտ նույնպես՝ Մարտունու, Կիրովականի և մի քանի այլ շրջաններում մարտին սերունդը վերցնելուց հետո, մայիսին բեղմնավորվել ե 300 գլուխ վոչխար: Դրա արդյունքը նույնպես դեռ հայտնի չե: Մի բան հայտնի յե, վոր 300 գլուխ մայրերից 8 որվա ընթացքում բեղմնավորվել ե 59 գլուխ, վորոնք նոկտեմբերին կծնեն:

Կասկած չկա, վոր այդ փորձերը դրական արդյունք կտան: Բայց չի կարելի պնդել, թե բոլոր վոչխարներին կարելի յե տարեկան 2 անգամ ծննդյանը: Այդ անհնարին ե: Հարկավոր ե ընտրել ուժեղ, լավ զարգացած, լավ խնամված մայրերին, նրանց կերակրել խտացրած ուժեղ կերպ, ապահովել տաք ու լավ շենքով: Առհասարակ այն կոլտնտեսությունը, վորը հաբարություններ չունի, շատ կեր չունի, լավ ու տաք գում չունի գառներին ձմեռը պահելու համար, լավ կանի, վոր յերկուսի հետեւից շընկնի, թե չե՝ մեկն ել ձեռքից կդնա:

Մեզ համար ել ավելի կարենը ե խոշոր

լեղջերավոր անասունից ամեն տարի, և նույնակ 10—11 ամիսը մեկ անգամ, սիստեմատիկ կերպով հորթ վերջնելու խնդիրը:

Այդ նույնպես հնարավոր է, ընկերներ: Դրա փորձը նույնպես մեզ տվել է կոլտնտեսալին շարժումն իր ամրապնդման հենց առաջին տարին:

Ալլահվերդու Ուզունլար գլուղի կոլտնտեսության ֆերման (վորի վարիչ ընկ. Մեխակը մասնակցում եւ այս խորհրդակցությանը) ծանոթ է ձեզ նրանով, վոր այնտեղ անասունները լավ են խնամվում և հիանալի տավար ունեն: Այնտեղ բեղմնավորված կովերը մինչև ծնելը լավ կերակրվում են:

Հենց այդ լավ խնամելու հետեանքով այնտեղ (ինչպես և մեր առաջավոր շատ ֆերմաներում) կովերի մի գույքի մասը բեղմնավորվում է ծնելոց մեկ, մեկուկեա ամիս հետո, մի բան, վոր մենատնտեսալին գլուղում բացառիկ լերեվութ եւ լեզել: Յեկ ահա այդ ֆերմայում մի շարք կովեր՝ «Մարալ», «Բանոշը», «Սոտոն», «Սաթիկը», «Աղունիկը» և ուրիշներ՝ անցյալ տարի մեկ հունվարին ծնեցին, մեկ ել՝ նույն տարվա վերջին: Նույն թվականին լուրաքանչչուր կովեր ստացվեց 2 հորթ: Մի ուրիշ որինակը չուկտեմբերյան շրջանի Գեշուրու գլուղի կոլտնտեսության «Կաքավ», «Ձիդան», «Քոլե» և «Բողո» կովերն անցյալ տարի հունվարին ծնեցին, գետարվարին նորից հղիացան և ծնեցին:

առեմբերի վերջերին, ապա հղիացան նոյնեմբերին և ծնելու լեն այս տարվա ողոստոս ամսին: Այդ կովերը վերջին 5 տարում 6-ական հորթ են տվել: Խնամքը հիանալի լե, այնպես, վոր արդ կովերի հորթերից մի քանից ժամկետից մի տարի շուտ են հղիացել և ծնել:

Որինակները բավական են. մի բան պարզ է լույսի պես: Այդ այն է, վոր այն կոլտնտեսությունները, վորոնք զինված են մեքենաներով, ունեն լավ հող ու խոտհարքներ, ունեն զոտեխնիկներ, լախ հնարավորություններ, ինչպես ասում են՝ «պալատներում պահելու» իրենց անասուններին, առատ կերակրելու և անշեղ կիրառելու զոտեխնիկացի բոլոր պահանջներն անասնաբուծության բնագավառում, կարող են և պետք եւ հասնեն այն դրության, վոր իրենց անասուններն աճեն, փարթամանան՝ մենատնտեսալին գլուղում չտեսնված չափով և ավելի շուտ-շուտ, ավելի լավ, ավելի կայտառ ու առողջ սերունդ տան, քան տվել են իր ժամանակին իրենց «կուլտուրական» անասնաբուծությամբ հոչակված կալվածատերերի ու կուլակների նախիրները:

Եթե առաջարկութեան մասին
Կամ, ընկերներ, մեր լերկրում միսը, կաթնամթերքը, բուրդն առատացնելու ուրիշ միջոց ես: Անշնուշտ, կա:

Դա անասունների մթերատվության բարձրացումն է, վորը կազմում է լերկրորդ հնդամյա-

կում վորակի գծով մղվող պալքարի պատասխանառությունը մեկը։ Այդ խնդիրն իր ամբողջ սրությամբ մեր առաջ դրված է մանավանդ այն պատճառով, վոր մենք այդ գծով խիստ հետ ենք մնում կապիտալիստական յերկրներից, մինչդեռ, տնտեսության սոցիալիստական սխտեմի շնորհիվ, մեր պատմական իրավունքն է՝ կապիտալիստական աշխարհը յետ թողնել բոլոր գծերով։ Մինչդեռ, տեսեք, թե գործն ինչ դրության մեջ է աշխարհում։

Հոլանդիայում կովը մեկ տարում միջին հաշվով տալիս ե 33 ցենտներ կամ։

Շվեյցարիայում	31 ցենտներ
Դանիայում	27 »
Անգլիայում	21 »
Գերմանիայում	19 »
Կանադայում	17 »
Ամերիկայում	16 »
ԻՄՀՄ-ում	10 »
Անգրկովկասում	7,5 »
Հայաստանում	6—7 »

Ահա թե վորտեղ է պալքարի ասպարեզը, ընկերներ։

Ճիշտ է, վոր կուտանտեսությունների աճման գուգնըթաց մեր յերկիրը պատվեց լուսավոր կուտարական գոմերով, վորոշ քայլեր արվեցին անասունների ցեղի բարելավման գծով, ընդա-

ձակվեց կերաքուլսերի ցանքը, արմատացակ այսպիսի նոր կեր, վորպիսին սիլոսն եւ Վերափոխվող գյուղացին բարելավեց անասունների խնամքը, և, այդ բոլորի հետևանքով, վերջին 1—2 տարում ավելացավ մեր անասունների մթերատվությունը։

Այնուամենայնիվ անասունների մթերատվության գծով մեր և կապիտալիստական աշխարհի միջև ընկած վիճը մեծ է և այդ վիճը պետք է լցվի արագությամբ, այնպիսի արագությամբ և վճռականությամբ, վորպիսի գործին ընդունակ են միայն բոլցեվիկները։

Մեզ մոտ, ընկերներ, բոլոր տվյալները կան անսամբըուժությունն իր բոլոր կողմերով Հոլանդիայից առաջ տանելու։ Մեր յերկիրը հարուստ է հիանալի արտօններով, կերաբույսերի համար ընդարձակ և արդավանդ դաշտերով։ Ապա բոլորից ե հայտնի, վոր մեր կոլտնտեսությունները հրաշքներ կարող են գործել (և արդեն սկսել են գործել), և վոր մենք խոշոր, սոցիալիստական տնտեսության միջոցով սարեր կարող ենք շուռ տալ։ Անասունների համար իդեալական հարմարություններ կարող են ստեղծվել, և գիտական հետազոտական գործն անասնաբուժության ընագավառում լայն չափով կարող է ծավալվել, զոտությունիկան լիովին կարող է կիրառվել միայն և միայն մեզ մոտ, Խորհուրդների յերկրութ, մեր

տնտեսաձևի գերազանց առավելությունների շնորհիվ: Սակայն այդ անսպառ հնարավորություններն առաջման դեռ շատ փոքր չափով են գործի գերածված, բայց պետք ե գերածվեն մեր բոլորի ջանքերով: Այստեղ մեր հիմնական խնդիրն ե բարելավել անասունների ցեղը, արագ բարձրացնել նրանց վորակը թե մետիզացիավի և թե որինակելի խնամք կազմակերպելու միջոցով:

Թե ինչպիսի անասուններ կարելի յե ստանալ, յերեսում ե աշխարհի ամենաարդյունավետ կովերի որինակից: Վաս չի լինի, վոր մեր անասունապահները ծանոթանան նրանցից մի քանիսին:

Ասում են, որինակ, Գերմանիայում «Գերարուդ» անունով մի կով կա, վորը մեկ տարվա ընթացքում տվել ե 613 կիլոգրամ անարատ յուղ: «Գերարուդը» տարեկան տալիս ե 13.819 կիլոգրամ կաթ և իր ցեղի մեջ յեզակիներից ե, վորի կաթի մեջ յուղը կազմում ե 4,44 տոկոս:

Այդ կովը յուղատվության տեսակետից մինչև հիմա ել համարվում ե համաշխարհային ռեկորդիստկան. նա պատկանում է գերմանական Ռոտֆրիլլանդական կան Արեվելան Պրուսիայի տավարի ցեղին: Մեր Միության մեջ այս ցեղից տարածված ե գլխավորապես Լենինգրադի, Մոսկվայի, Արեվելան Սիբիրի, Հեռավոր Արեվելքի և Ռուրալի շրջաններում. հիշյալ շրջանների համար այս տավարն ընդունված ե իբրև պլանային ցեղ:

Բայց ավելի լավ չե՞նալիք մեր խորհարնակություններում և կոլտնտեսություններում մեր խոկ ձեռքերով աճեցրած կովերին:

Սրանից մի քանի տարի առաջ, յերբ լրագրերում գլում ելին, վոր արտասահմանում կովեր կան, վորոնք տարեկան տալիս են 10—12 հազար կիլո կաթ, այդ լուրերը մեզ մեծ զարմանք ելին պատճառում, սակայն այժմ նման տեղեկություններն այլևս այնքան ել զարմանք չեն պատճառում, վորովհետև մենք արդեն ունենք մեր սեփական ռեկորդիստկաները: Սրանցից են, որինակ, «Մարիան» և «Մալկան», վորոնք իրենց կաթնատվությամբ հետ չեն մնում համաշխարհային ռեկորդիստկաներից: Դեռ ավելին. «Մարիան» իր որական կիթով գերազանցել ե աշխարհի ամենակաթնառատ կովերին՝ տալով որական 61,5 կիլո կաթ:

«Մարիան» պատկանում է գերմանական կարմիր տավարի ցեղին (կարմիր նեմկա). նա մասնավոր անտեսությունում յեղած ժամանակ, թերակերակրության և վատ խնամքի պատճառով չեր կարողանում իր կաթնատու հատկությունները. լիովին արտահայտել, և միայն կոլտնտեսությունումն ե նա աշխարհին հայտնի դառնում:

Մյուս հոչակավոր ռեկորդիստկան հանդիսանում ե «Մալկան», վորին Խարմագորիան տոհմային տնտեսությունը գնել ե նույնագործադաշտիական տնտեսությունից: «Մալկան» 1929 թվին հա-

մամիութենական շրդ կոնկուրսում իր կաթնատվությամբ առաջին մրցանակը վեցըրեց՝ առաջուղաբողջ կաթնատվության շրջանում 12.133 կիլո կաթ:

Կասկած չկա, վոր արդ անասունների այդ աստիճանն կաթնատվությունն առաջին հերթին արդյունք ե նրանց ցեղականության: Թե մաքրաբան և թե մետիս անասունների արդյունավետությունը հասարակ տեսակի անասունների հետ համեմատել չի կարելի:

Ահա, որինակ, Սարատովկայի կոլտնտեսության անդամ Ժաբինի Ռոզա կովը, վորը տարեկան տալիս ե 54 ցենտներ կաթ, կամ համարյատան անգամ ավելին՝ նույն շրջանի հասարակ կովերից:

Նույն կոլտնտեսության անասնապահ Վասիլ Յակուշովը դեռ անցյալ տարի ասում եր՝ մեր կովերից ամեն մեկը մինչև հոկտեմբեր միջին հաշվով տվել ե 15 ցենտներ կաթ: «Զերնովկա» կովը տվել ե 33 ցենտ. կաթ՝ առանց քուսպի, միայն խոտով:

Այդ նրանից ե, վոր Սարատովկայում լավ ցեղի անասուններ են պահում, մետիսացիա լին կատարում, սքանչելի գոմեր ունեն:

Ուրիշ փաստեր.—Շագարդայի Փերմայի «Սուրմա» կովը մեկ տարվա ընթացքում տվել է 32 ցենտներ կաթ, «Սալլանկա կովը՝ 30 ցենտ.,

իսկ սիմենտալի խառնուրդ «Լիսկա» կովը՝ 27 ցենտներ: Սրանք կաթնատվության ուեկորդավիճակներ են, յեթե նկատի ունենանք, վոր Մարտունու, Ն. Բայազետի, Ապարանի շրջաններում տեղական կովերը տարեկան 5—6 ցենտներից ավելի կաթ չեն տալիս: Մենք այդ շրջաններում անասուններ ունենք, յես ուղղակի կասեմ, վոր Խոշոր սոցիալիստական տնտեսությանը վայել չե արդպիսի վտիտ, գաճաճ անպետք անասուններ ունենալը:

Ահա ինչու, ընկերներ, մեզ մոտ ամենավճռական կերպով պետք ե գրվի անասունների ցեղի և ցեղած թե տեղական և թե ցեղական անասունների խնամքի բարելավման հարցը:

Ընկերներ, վորոշակի պետք ե ասեմ վոր անասունների մետիսացիայի գործը չայաստանի շրջանների մեծ մասում բոլորովին կազմակերպված չե, և այդ գործը, ինչպես հարկն ե, առաջ չի մղվել Հողգողկոմատի և նրա որդանների կողմից: Մենք նույնիսկ շրջաններ ունենք, վորուել ցեղական ցուլեր բոլորովին չկան: Այդ գըրությունը յերկար հանգուրժել չի կարելի:

Այս տարի ծրագրվում ե այդ գծով նշանակալից քայլ անել: Փողկոմխորհի վորոշման համաձայն՝ այս տարի Միության զանազան շրջաններից ներմուծվելու յե 200 գլուխ Շվեյցարիայի 50 գլուխ ցեղական յերինչ, և ցեղական ցուլերով

պետք է բեղմնավորվի 16815 կով կամ, անցյալ տար-
վա համեմատությամբ, մոտ յերկու անգամ ավելի:

Այդ նույն հարցն իր վողջ սրությամբ դըր-
ված է նաև մանր յեղջերավոր անասունների գծով:
Այստեղ մետիսացման գործն ավելի վատ է կազ-
մակերպված: Անցյալ տարի ամբողջ Հայաստա-
նում ցեղական խոյերով բեղմնավորված է ըն-
դամենը 3334 գլուխ վոչխար—չնչին մի քանա-
կություն: Այստեղ պետք է հրապարակով դիտո-
ղություն անել Դիլիջանի, Ալլահվերդու, Թալինի
և մի քանի այլ շրջանների ընկերներին, վորոնք
տուրք են տվել գուղացիական պահպանողական
տրամադրություններին, և խնդիր են դրել՝ յետ
վերցնել շրջաններն ուղարկված Մերինոս ցեղի
թանկարժեք խոյերը, վորովհետև մի քանի գլու-
ղերում դիմադրում են այդ ներմուծությանը:

Բացի բարձր ցեղի այն վոչխարներից, վոր
մենք ստանում ենք Ռուսաստանից, մենք, ընկեր-
ներ, վոչխարի հիմնալի տեսակներ ունենք: Յե-
թե հարցնեք Զոլաքարի կոլտնտեսության ֆեր-
մալի վարիչ ընկ. Համբարձում Սահակյանին, թե
ձեզ մոտ մի կովը քանի՞ վոչխար ե գնահատ-
վում, նա ձեռքը կդնի Բալբաս ցեղի հակա, գե-
ղոցիկ, առատ կաթ ու բուրդ տվող վոչխարի
վրա և կասի՝

—Մի կովի հետ չեմ փոխի:

Թեև ընկ. Համբարձումը մի քիչ չափազան-

ցեցնում է, բայց նա իրավացի յէ այն տեսա-
կետից, վոր Մարտոնու կովերը մանր ու
անարդյունավետ են, իսկ վոչխարն ընտիր տե-
սակի յէ: Ահա վորաեղ ե պետք մետիսացիան:

Խնդիրն այն է, վոր այդ տեղական գաճաճ
անասունների սերունդը բարելավենք ցեղական
ցուլերի միջոցով և մեր յերկրի բոլոր անկյուն-
ներում տարածենք Մարտոնու Բալբասը, ինչ-
պես և վոչխարների այնպիսի թանգարժեք տե-
սակները, վորպիսիք են Կարակուլը և Մերինոսը:

Ապա, ընկերներ, դրան զուգահեռ դրվում է
մեր տեղական տեսակներն «իրենք իրենց մեջ»
զարգացնելու խնդիրը: Կորոնտեսային շարժման
վերջին տարիների փորձից յերեաց, վոր իր՝ մե-
նատնտես, աղքատ ու խղճովկ տիրոջից ազատա-
գրված անասունը համայնական գոտում, առաս
մնադի և հոգատար խնամքի պայմաններում, տա-
րեցտարի ավելացնում է իր մթերատվությունը:

Այսպես, որինակ, Կոտայքի Զառ գյուղի Փեր-
մալի կովերը 1934 թվին միջին հաշվով 50-ա-
կան կիլո ավելի կաթ ավին, քան նախորդ տա-
րին, իսկ վոչխարները, միջին հաշվով՝ 10-ական
կիլո:

Սիսիանի Բորիսովկա գյուղի կոլտնտեսու-
թյան կովերի միջին կաթնատվությունը 1934
թվին նախորդ տարվա համեմատությամբ, լավ
խնամքի շնորհիվ, 7,2 ցենտներից բարձրացավ
9,1 ցենտների:

Տեղական կովերը լսվ խնամքի շնորհիվ շատ
կաթ են տալիս Համզաշիմանի, Ուզունլարի
(Զնուր կովը՝ 26 ցեսները), Շահնազարի և մյուս
առաջավոր ֆերմաներում:

Յեվ յեթե, ընկերներ, այս ամառ մենք մեծ
քանակությամբ սիլոս պատրաստենք, գործի
դնենք խոտհար մեքենաները, խոտհնձի աշխա-
տանքը ճիշտ կազմակերպենք, հաջող պայքարենք
կորուստների դեմ, կառուցենք լնտիր գոմեր,
այնպիսի գոմեր, ինչպիսիք են, որինակ՝ Համ-
զաշիմանի, Սարատովկայի և մյուս առաջա-
վոր կոլտնտեսությունների գոմերը, և յեթե
լսվ ընակարանի ու առատ մննդի հետ ապահո-
վենք անասնապահների կոլտուրական, հոգա-
տար վերաբերմունքը դեպի անասունը, ապա
վատահ պետք ե ասել, վոր վոչ միայն ցեղական
անասունները, այլև տեղական մեր արհամարհնված
անասունները մի տարվա մեջ 20—25 տոկոսով
կբարձրացնեն իրենց մթերատվությունը:

Ահա այդ կապակցությամբ, ինչպես և մեր
անասունների տեսակները բարելավելու կապակ-
ցությամբ, թույլ տվեք, ընկերներ, ձեր առաջ
ամենայն սրությամբ դնել անասնաբուծության
գործն առաջ մղող կենդանի Մարդկունց հարցը:
ԵԵՐՈՐԴ

Առաջնորդի վերջին հանձարեղ լողունզը, թե
կադրելն են վճռում ամեն ինչ, և թե պետք ե

հոգատարությամբ աճեցնել կադրելը, առան-
ձին յեռանդով ու ջանասիրությամբ պետք
է կիրառել անասնաբուծության բնագավառում,
քանի վոր դա մեր գյուղատնտեսության կարե-
վորագույն և միաժամանակ ամենից հետ մնա-
ցող ճյուղն ե, և ամենից շատ այդ բնագավա-
ռում ե, վոր կադրելը հետամնաց են ու աճեց-
նելու, կուլտուրականացնելու մեծ կարիք ունեն:

Լուսի պես պարզ ե բոլորիդ, վոր սոցիա-
լիստական տիպի անասնաբուծությունը կուլ-
տուրայի վորոշ աստիճան ե պահանջում: Պա-
հանջգում ե կարողանալ աշխատանքը, վարձա-
տրությունը և հաշվառումը ճիշտ կազմակերպել
այդ՝ ֆարբիկայի նման տնտեսության մեջ, կա-
րողանալ արոտները բարելավել և սպագործել
գիտության պահանջների համաձայն, կարողանալ
առաջին ոգնությունը հասցնել հիվանդ անա-
սունին, վոչ թե աղյուսի փոշին վերքի վրա ցա-
նելով՝ ինչպես անում ե մենատնտեսը բուրդը խու-
զելու ժամանակ վոչխարի մեջքը կտրելիս, այլ գոր-
ծել անասնաբուժական կանոնների համաձայն: Վեր-
ջապես, պահանջգում ե հասկանալ թե վոր անա-
սունի համար ինչ կերի ռացիոն պիտի կազմել
ինչպես վարվել հղի և «ծննդկան» մայրերի հետ,
ինչպես խնամել մատղաշը նոր զոտեկինիկայի
պահանջների համաձայն: Քիչ են հասկանում,

ընկերներ, մեր անասնապահներն այդ խնդիրները: Յեկեք այդ խոստովաննեցեք բացեիբաց: Յեկեք խոստովաննեցեք, վոր մեր անասնապահների մեծ մասը հետ ե մնում խոռոր ՏԵՍԽՈՒԹՅԱՅԻ պահանջմերից, դեռ կուլտուրական չե այն չափով, ինչ չափով պահանջում է խոշոր տընտեսությունը: Անկուլտուրականությունը, վորպես ժառանգությունն, նրանք բերել են մենատնտեսային խավար գյուղից, ուր չորանի գնահատականը տրվում եր այն բանի հիման վրա, թե նրա գոտիկն ինչքան ե անիծոտ, այսինքն՝ թե քանի տարի յե նա առանց գոտին արձակելու, առանց հանվելու հսկել հոտին:

Այժմ այդ չե կոլտնտեսական լավ հովվի չափանիշը: Այժմ նրա գործի չափանիշն այն ե, որինակ, թե կարողանում ե նա հասկանալ ցեղական անհասունի, ցեղական հորթի լեզուն, կարողանո՞ւ, մ ե կուլտուրական խնամք տանել, այնպես, վոր նա չսասկի, ինչպես աստկում են Ստեփանավանի մի քանի ֆերմաններում: Ստեփանավանի փորձն այդ գծով մեզ շատ բան ե ասում: Այստեղ մենք անցյալ տարի մատղաշների անկման ավելի բարձր տոկոս ունեցինք, քան ուրիշ վորեն այլ շրջանում: Այս տարի նույնպես այդ գծով Ստեփանավանն իր մքցակիցը չունի: Հայաստանի յերկու տոկոս մի ջինի դիմաց այստեղ հորթերի անկումն արդեն Շ տոկոսից անցնում ե:

Պարզվում ե, վոր այնտեղ ամենից շատ սատկում են ցեղական հորթերը: Յեկ ինչ կասկած, վոր այդ տեղի յե ունենում բացառապես այն բանի պատճառով, վոր այնտեղի մեր նախրապահների ու մանավանդ կթվորների կուլտուրական մակարդակն այնքան բարձր չե, վոր համապատասխան կուլտուրական վերաբերմունք ապահովվի ցեղական մատղաշինկատմամբ. անառնապահն այստեղ չի կարողանում զոտեխնիկական և սանկտուրական մինիմումն ապահովել ֆերմայում:

Ստեփանավանի մի քանի ընկերների մեջ դեռ կան անցյալ տարվա այն սիսակետի մնացորդները, թե ազնվացեղ հորթերի անկման տոկոսը, ընականաբար, բարձր պետք ե լինի՝ տեղականի համեմատությամբ:

Մարդ ակաւեյից հիշում ե անմահ հովհաննես Թումանյանի «Գաբո բիձու շերամապահությունը»: Գաբո բիձեն առաջին անգամ շերամի վորդ ե տանում լոռի, բայց վորդերը կոտորվում են: Գաբո բիձեն զարմանում ե, թե ինչու վորդերը կոտորվեցին ու վնթինթում ե՝

«Այ տղա, եղ անտեր նինուները մի բանի որ կացան ու կոտորվեցին. նիմի թե տաեն նրանից եր, վոր գոմեի ձազը առ եր մոս կապած, փոնտատկ եր տալիս, թե՞ նրանից եր, վոր հավերը տուն ելին բափում կցանարում. դե վո՞նց տնենք: Հօ չե՞յինք կարող հավերը կոտորել կոմ ձազն սպանել: Թե տաեն տնձ-

բեվիցն եր, վոր յերդիկովը ներս եր բափիլում, մին
ել մարդ միտք ե տառում թէ՝ բա հաղաքումն անձեռվ
չի զալի^{• • . *}։

Մի քանի տեղեր, ընկերներ, անասնապահների
անփութության և անկուլտուրականության
պատճառով ցեղական մատղաշլ Գաբո բիծու աբըր-
շումի ձիճվի որումն եւ Լոռու ցեղաբուծական խորհ-
ոտնտեսության հորթանոցներում, ասում են, վոր
ձմեռը փչում եյին միջանցիկ քամիները, Սարատով-
կայում և մի քանի այլ ֆերմաներում գեպքեր են
յեղել, վոր ցեղական հորթերին փորհարինք են
գցել, կեղտոտ են պահել: Ցեվ յերբ հորթերը, չը
դիմանալով այդ բարբարոսությանը, ստիպված են
լինում թողնել այս գեղեցիկ աշխարհը, Լոռեցի
Գաբո բիծու խմասուն թոռներն իրենց պապի
հման բացականչում են:

— Աղա, ես վժնց ելավ . . .

Մյու անկուլտուրականությունը պետք ե վե-
րացնել, այն գուրս պիտի քշել առաջին հեր-
թին չորանների, նախրապահնների և կթող անաս-
նապահների միջից, նրանց գործի միջից: Զե՞ վոր
նրանք են անասուն պահողները, նրանց ձեռքին
ե գՏնվում մեր անասնաբուծության բախոր,
նրանի են այժմ գործի տերեր: Նետվապես,
նրանի այժմ պետք ե կուտուրական, զիտուն յեվ
խելացի տերեր լինեն: Այժմ միայն փորձով շատ
առաջ չես գնա. առաջ քո յերկու կովն եր ումի
մողին, իսկ այժմ ահագին նախիր, ցեղական

անասունների նոր գոմեր, կաթ մշակելու մեքե-
նաներ: Այժմ պահանջվում ե հասկանալ այդ
բոլորից, հասկանալ անասունի լեզուն, գրագետ-
ինել, տրապետել զոռնեխիկային:

Մյու խիստ կարևոր ե մեր անասնաբուծու-
թյան համար: Աններելի յե, յերբ մենք չենք
մտածում այն մարդկանց կուլտուրական մակար-
դակի մասին, վորոնց ձեռքին են գտնվում կու-
տնտեսային և խորհանտեսային անասունների հո-
տերն ու նախիրները: Այդ մասին պարտավոր ե
հոգալ ամեն մի կոլտնտեսություն: Այդ մասին
առաջին հերթին պետք ե հոգան Հողժողկոմատը,
շրջանային կուսակցական և խորհրդային կազ-
մակերպությունները և իրենք՝ կուտնտեսական-
ները: Անցյալ ձմեռ մի քանի տասնյակ հովիվ
պատրաստելը մի բաժակ եր ծով պահանջի հա-
մեմատությամբ: Բառացի կերպով՝ մեր բոլոր հո-
վիվերը պատրաստվելու, կուլտուրականանալու
կարիք ունեն: Ուստի, ինչպես մեր կուսակցու-
թյան կենտրոնական որգան «Պրավդան» ե վա-
ղուց ասել՝

«Փամանակն ե, վոր հողային որգաններն
ընդհուպ մոտենան նախրապահնների յեվ հո-
վիվների վրակի բարձրացմանը: Վոյ սի-
այն պետք ե բննուրյան առնել նախրա-
պահնների յեվ նրանց ոգնականների ամ-
բողջ կազմը, այլեվ պետք ե նրանց դասրն-

*) Հովհ. Թումանյանի յերկեր, եջ 211:

բացներ ուղարկել։ Միայն նրան կարելի յէ կոլտնեսային հովիդ յեզ նախապահ ընդունել, ով սիրապետում է զոռութիւնիկային յեզ անասնաբուժական մինիմումին։

«Պրավդա»-յի այս պահանջը մեր կուսակցության պահանջն է։ Այս պահանջն անշեղ կերպով պետք է կատարեն մեր բոլոր կազմակերպությունները։

ԶՈՐՅՈՒԹ

Ցես, ընկերներ, անցնում եմ մեր անասնաբուժության ամենակարևոր հարցերից մեկին՝ արոտաշինարարության հարցին, մի հարցի, վորը ծեծվում է ամեն տարի և վորքան շատ է ծեծվում, այնքան ամուր կանգնած է մնում իր աեզում։

Հայաստանը հարուստ է ալպիական արոտներով ու խոտհարքներով. զրանք կազմում են մոտ 1.200.000 հեկտար տարածություն։ Յեզ յեթե նկատի ունենանք, վոր մեր ալպյան արոտներն ընկած են այն շրջաններում, ուր պետությունը պլանային կարգով զարգացնում է անասնաբուժությունը՝ փորպես այդ շրջանների տնտեսության գլխավոր ճյուղը, յեթե նկատի ունենանք նաև այն, վոր մեր անասուններն իրենց վողջ տարգա կերի 70 տոկոսից ավելին արոտներից են ստանալու, և Հայաստանում ստացվող կաթի 65 տոկոսն ու յուղի 75 տոկոսն ստացվում է անասունների արոտային շրջանում, և յեթե դրան գումարենք նաև

այն հանգամանքը, վոր մեզ մոտ ցանովի կերպությունների կուլտուրան թույլ է զարգացած, ապա պարզ կլինի, վոր արոտները մեր անասնաբուժության համար վճռական նշանակություն ունեն։

Վոր մեր արոտների վիճակը լավ չե, այդ քաջ հայտնի յէ բոլորիկ։ Չեր աչքի առաջ մեր հիմնալի արոտներն ոգտագործվում են անկուլտուրական ձևով, հոգ չի տարգում նրանց բարելավման համար և հասկանալի յե, վոր մեր արժեքավոր արոտները վչացվում են, պակասում է նրանց խոտավետությունը, չքանում են խոտի լավ տեսակները, և հետզետե մոլախոտն իր տեղը լայնացնում է մեր այնպիսի հրաշալի սարերում, վորպիսին, որինակ, Դարախաչն է։

Քայլքայման այդ յերեսությունները, վոր ունենք ճիշտն ասած—մենատնտեսային գյուղի բազմաթիվ արատներից մեկն են։ Մենատնտեսը դարեր շարունակ հոշոտել է արատները, վոչ մի կուլտուրալ կարգ չի մացըել այստեղ, վորովիերա, վոչ մի կարգ չի մացըել այստեղ, վորովիերա, թե ինքն եր զուրկ կուլտուրայից ու կարգից, և թե այն իշխանությունը, վորի լծի տակ եր նա-

Արտների բարելավման գծով, կուլտուրական արածեցման գծով լայն աշխատանք ծավալու բոլոր նախադրյալներն արդեն ստեղծված են շենքնիկ այն բանի, վոր կոլտնեսային կարգերը հաղթանակել են գյուղում։

Այժմ արդեն անասնապահական առաջավոր

կոլտնտեսություններն այդ ուղղությամբ վորոշ փորձ ունեն. Համամլվի, Ուզունլարի, Համդաշիմանի, Ուռուտի, Շահումյանի կոլտնտեսությունները մի քանի տարի յե անցել են արոտները բաժանելու և մաս-մաս արածեցնելու գործին և մեծ արդյունքի յեն հասել:

Բայց դեռ կոլտնտեսությունների ճնշող մեծամասնությունն արոտներն արածեցնում ե հին ձեռվ և վորևե աշխատանք չի կատարվում նրանց բարելավման համար:

Թարր, թունավոր խոտերը, աճող թփերը, անձրևի ժամանակ արածեցնելը, նախիրը վերեկց ներքեւ քշելը (վորի հետևանքով և արոտի մակերեսն ե այլանդակվում, և խոտն ե գնում վոտիտակ),— այդ բոլորը կոտրում են մեր արոտների մեջքը:

Նայենք թեկուզ վերջին յերկու տարում այդ գծով կատարված գործին:

Արոտները պարարտացնելու, փոյխելու առանց այն ել խղճուկ պլանը Հայաստանում 1933 թվին կատարվել ե 52, իսկ 1934 թվին՝ 13,5 տոկոսով:

Արոտները քարերից, կոճղերից և թունավոր բույսերից մաքրելու պլանը 1933 թվին կատարվել ե միայն 12,5 տոկոսով, իսկ 1934 թվին՝ 88 տոկոսով, թունավոր բույսերից մաքրելու պլանը՝ 17,5 տոկոսով:

Այդ տարիներն արոտների հսկայական տարածությունից միայն 3,400 հեկտար ե ոգտագործված հատվածային սիստեմով. վոչ մի հեկտար չի պարարտացված, վոչ մի հեկտարի վրա ցանելու միջոցով կանաչի խտացում չի կատարված:

Այսպես ե ահա գրությունը, ընկերներ, մեր անստեսության այդ կարևոր հյուղում:

Ի՞նչ պիտի անել.

Համաձայն կառավարության կողմից հաստատված պլանների՝ այս տարի 50—60 հազար հեկտարի վրա վորոշ աշխատանքներ պիտի ձեռնարկվեն՝ այսինքն՝ 9800 հեկտար արոտավայր խոտհարքի յե վերածվելու, 28 հազար հեկտար տարածություն մաքրվելու յե քարերից, կառուցվելու յե 11 ջրամբար, վերանորոգվելու յե՝ 40, ջրվելու յե 1000 հեկտար տարածություն, կառուցվելու յեն արոտային ձանապարհներ (24 կիլոմետր), նորոգվելու յեն հին ձանապարհները, փոցխվելու յե 2000 հեկտար տարածություն, 3390 հեկտար մաքրվելու յե թունավոր բույսերից, հերկված խոտհարքներից և արոտներից 40 հեկտար վերականգնվելու յե, 1530 հեկտարի վրա քամուգելու յեն թմբերը, կոճղերը և այլն:

Այժմ խնդիրն այն ե, վոր մեր կուսկաղմակերպությունները, հողային որդանները, գյուղական իշխանությունները, կոմյերիտմիությունը, պիո-

ներիան և կոլտնտեսական վողջ գյուղացիությունը պայմանական այդ պլանների կատարման համար այնպէս, ինչպէս ամեն տարի պայմանական գանձի պլանների կատարման համար, յեվ վոր հոդքածինների ու ժերմանների վարիչները, զյուղխորհուրդների ու կոլվաշությունների նախագահներն առուածինարարության գծով իրենց տրված պլանների կատարման համար ԱՅՆՊԵՍ ՊԱՏՍ.ՍԻՍ.ՆՍ.ՏՈՒ ԼԻՆԵՆ, ԻՆՉՊԵՍ ՊԱՏՍ.ՍԻՍ.ՆՍ.ՏՈՒ ՅԵՆ ՅԱ.ՆՔԻ ՊԼԱ.ՆՆԵՐԻ ԿԱ.ՏԱՐՄԱՆ ԿԱ.Մ ՄԱ.ՏՂԱ.ՃԻ ՊԱ.ԴՊԱ.ՆՈՒԹՅԱ.Ն ՀԱ.ՄԱ.Բ. Առանց այդ գործում ուժիմ մացնելու, այդ մեծ գործը տեղից շարժել չենք կարող:

Թվածու ձեռնարկումները բոլորն ել կարեոր են մեր անսամնաբուծության համար, բայց յեւ կուզեյի առանձնապես շեշտել անսառունների արածեցման սիստեմն այժմ և եթ հիմնովին փոխե ու անհրաժեշտությունը: Զե՞ վոր թե արոտների պահպանության և թե կաթնատվության ու մատովության ավելացման գործում հենց դա յեւ գլխավորը:

Ի՞նչպես են արածեցնում այժմ մեր նախարարականները և հովիքները: Հանդի բոլոր մասերում ցըկած են նրանց նախիրներն ու հոտերը, և ամբողջ արոտը վոտքի տակ ե, նրա վոչ մի մասը «շունչ քաշելու» հնարավորություն չունի: Յեվ հենց այդ սխալ ոգտագործման շնորհիվ մեր

անասուններից շատերը հիանալի արոտներում գտնվելով հաճախ կարու են մնում հյութալի, անասունի վոտի տակ չընկած թարմ խոտի:

Արոտների խոտն ոգտագործելու այդ սխատեմին պետք ե անհապաղ վերջ տալ և անհապաղ անցնել հանդի հատվածներով, մասմաս, հերթով արածեցնելու ձևին: Այդ ձեր վազուց կիրառվում ե Գերմանիայում, Ամերիկայում, Շվեյցարիայում և այլ յերկրներում: Վերջին 4 տարվա ընթացքում Միության շատ վայրերում նույնպես, գիտահետազոտական հիմնարկների ցուցումներով, սկսել են կիրառել այդ ձեր: Այդ գծով հայանի յեն լենինգրադի կերերի ինստիտուտի, փորձակայանների, Ոմսկի կաթնատընտեսական զոնալ կայանի, ձիաբուծական, վոչխարաբուծական և մի քանի այլ ինստիտուտների աշխատանքը: Այդ գծով բազմաթիվ փորձեր են արված նաև Միության առաջավոր խորհությունաեսությունների ու կոլտնտեսությունների կողմից, վորոնց արդյունքներից պարզվում ե հետևյալը.

Արոտը հատվածներով արածեցնելու դեպքում կովերի կաթնատվությունը բարձրացել ե 17 տոկոսով, թեև այդ կովերն ավելի պակաս տարածություն ելին արածել, քան արածում ելին արոտը խառն ոգտագործելու ժամանակ:

Մատղաը 32 տոկոսով պակաս տարածու-

թյուն ե արածել և ավել ե 21 տոկոսով ավելի
աճ, քան ազատ արածեցման պայմաններում:

Վոչխուրները թեև տերիտորիան զգալի չա-
փով պակաս են ոգտագործել բայց նրանց կեն-
դանի քաշը սովորականից 8 տոկոսով ավելի յե
տճել Զիերի կենդանի քաշը 69 տոկոսով ավելի
յե աճել, քան հին ձեռվ արածեցնելու պայման-
ներում, թեև նրանք տերիտորիան 10 տոկոսով
պակաս են արածել:

Ավելի կամ պակաս չտփով արդյունքներ
ունենք մենք նաև Հայաստանում, վերև թվածս
կողմանտեսություններում, վորոնք անցել են արո-
տը հերթականությամբ արածեցնելու սիստե-
մին:

Ապա, ընկերներ, մի հաշվեցեք թե ինչ հրա-
կայական ոգուտ կստացվի այս հասարակ ու
հեշտ միջոցառումից, յեթե մեր բոլոր ֆերմաններն
ել արտ տարվանից սկսեն անցնել արոտն ոգտա-
գործելու այդ նոր սիստեմին, մի հաշվեցեք թե
այդ դեպքում ինչքան քիչ տերիտորիայի վրա,
ինչքան շատ անսառւն կարելի յե պահել և ինչ
հսկալական քանակությամբ մենք կաթի ու մսի
հավելում կունենանք:

Հայաստանի բոլոր շրջաններում մեր հոտերն
ու նախիրներն արգեն մտնում են ամառային
արոտների ոգտագործման շրջանը: Յեզ այժմ,
արոտային սեզոնի հենց սկզբից մեր առաջ, խորհ-

տնտեսությունների ու կոլտնտեսությունների
առաջ, ինդիր ե դրվում՝ լրջորեն մտածել մեր արոտ-
ների բարելավման մասին, լրջորեն հոգ տանել
նրանց ոգտագործումն ուացիոնալ կերպով կազմա-
կերպելու գործի համար: Կառավարությունն այդ
գործին բացառիկ նշանակություն ե տալիս և
խնդիր ե դնում, վոր Հողժողկոմատը, հողբաժին-
ները, կողանտեսություններն ու խորհունտեսու-
թյուններն այժմ և ինթ ձեռնամուխ լինեն և կար-
գին գլուխ բերեն հետեւյալ աշխատանքները.

Յուրաքանչյուր Քերմայի, յուրաքանչյուր հոտի
ու նախրի պետք ե կցել իր հանդամասը յեվ պա-
տասխանատու դարձնել այդ հանդամասի բարե-
կարգման ու կուլտուրական արածեցման համար:

Բոլոր Քերմաներում անպայման պետք ե
անցնել արոտը մաս-մաս ու հերթով արածեցնե-
լու պրակտիկային: Խառն արածեցմանը պետք ե
վեց տրվի կտրականապես:

Առողջները պետք ե մաքրել բունավոր խոտե-
րից, քարերից յեվ փոռոգել, փորեղ նեարավոր ե,
յեվ մեծ յեռանցով ու պատասխանափորյամբ
լծվել արողների բարելավման պետական պլանի
կատարմանը:

Ահա, ընկերներ, այս խնդիրները, վորոնց
վրա յես ուզում եյի ձեր ուշադրությունը հրա-
վիրել:

Պարզ ե, վոր այդ խնդիրները հնարավոր կլինի լիովին լուծել միայն այն ժամանակ, յերբ աշխատանքը ձիւտ կկազմակերպվի մեր ֆերմաներում, յերբ անասնապահության ֆրոնտն ապահովվի գործունյա, նվիրված կաղըերով և յերբ հոգատարությամբ ու խնամքով աճեցվեն այդ կաղըերը:

Բոլորիդ ե հայտնի, ընկերներ, վոր այս գծերով մենք տեղերում դեռ շատ թերություններ ունենք. մենք բազմաթիվ կոլտնտեսություններ ունենք, ուր գեռես չկան անասնապահական ամուր, մշտական բրիգադներ, կա հոսունություն անասնապահների շարքերում, կարեոր ուժերը տրվում են դաշտավարությանը, իսկ անասնապահական կաղըերը մնում են աչքից հեռու, ինչպես և քիչ չեն անհոգատար վերաբերմունքի դեպքերը՝ դեպի մեր անասնապահության ֆրոնտի լավագույն աշխատողները. Հարկավոր ե, ընկերներ, վոր դուք ինքներդ պայքարեք վերացնելու այդ բոլոր թերություններն աշխատանքի կազմակերպման ասպարիզում, հարկավոր ե, վոր դուք և շրջանների կուսակցական և խորհրդակին կազմակերպություններն ամենակատաղի պայքար ծավալեք ընդդեմ դիմագրկության, հանուն սոցիալստական ամրակուռ կարգապահության, հանուն սոցիալստական սեփականության պաշտպանության:

Հարկավոր ե, վոր Ել ավելի սրենք մեր զգությունը, ուժեղացնենք մեր պայքարը դասակարգային թշնամու դեմ, վերջնականապես արմատախիլ անենք խորհանտեսություններում և կոլտնտեսություններում նրա մնացորդները, նրա գործակալությունը, վորոնք դիմադրելով սոցիալիստական ուժերի հաղթարշավին՝ աշխատում են ամեն կերպ վնասել և կասեցնել մեր հաղթական վերելքը:

Հարկավոր ե, վորպեսզի կենսագործելով ընկ-Ստալինի մեծագույն լոգունքը կաղըերի մասին, համառությամբ տիրապետենք զոտեխնիկային, անասնական ֆրոնտի համար աճեցնենք բոլեիկյան նորանոր կաղըեր, և անասնապահական ֆրոնտին տանք մեր առաջավոր կոլտնտեսականներին:

Հարկավոր ե, ընկերներ, Ել ավելի ուժեղացնելով ինսերնացիոնալ կապը և համագործակցությունն անդրկովկասյան յեղբայրակից հանրապետությունների կոլտնտեսությունների հետ, Անդրյերկոմի ու նրա ղեկավար ընկ. Բերիայի գրլիսավորությամբ՝ հաղթող դուրս գալ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի անասնապահների միջև սկսվող սոցիալիստական մրցությունից:

Յեվ կասկածից դուրս ե, վոր այդ բոլորի հիման վրա, զլիսավորելով անասնապահական մասսաների յեռանդն ու խանդավառությունը՝ մենք

կապահովենք կուլտուրական անսամբլապահություն
ստեղծելու գործը և արագ քայլերով առաջ կըն-
թանանք սոցիալիստական անսամբլապահության
վերելքի ուղիով (բայոն ծափանարությաններ):



ՀՀ Ազգային գրադարան



NL0204957

ԳԻՆՅ ՅՈ ԿՈՊ.

30.143

67/1835,

По пути дальнейшего
развития
социалистического
животноводства



Речь тов. А. Гуляяна—председателя
СНК ССРА—на республиканском совещании
по животноводству—6 июня 1935 года

Сельхозгиз—Эривань 1935